ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<<25>> փետրվարի 2015թ. N 43 - Ա

ԳՈՀԱՐԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածով, հիմք ընդունելով <<Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհարիկ Մարգարյանի 2015 թվականի փետրվարի 25-ի դիմումը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի 2015 թվականի փետրվարի 25-ի զեկուցագիրը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. <<Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Գոհարիկ Մարգարյանին 2015 թվականի փետրվարի 25-ից 2015 թվականի մարտի 26-ը ներառյալ տրամադրել չվճարվող արձակուրդ՝ 30 օր տևողությամբ:
2. Գոհարիկ Մարգարյանին աշխատանքի մեջ համարել 2015 թվականի մարտի 27-ից:
3. Գոհարիկ Մարգարյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Լուկաշինի Հունան Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն դպրոցի փոխտնօրեն Անահիտ Հովհաննիսյանին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ